

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Հարավային Կովկասի տարածաշրջանը աչքի է ընկնում սառեցված հակամարտությունների առկայությամբ՝ թեժանալու վերահաս սպառնալիքներով: Անվտանգության և կայունության համար խնդրահարույց է այն կարևոր հանգամանքը, որ տարածաշրջանի երկրները որդեգրել են տրամագծորեն տարբեր անվտանգության ու պաշտպանական ռազմավարություններ և դաշինքներին ու ուժային կենտրոններին հարելու քաղաքականություններ: Տարածաշրջանային անվտանգությանը բոլորովին չի նպաստում նաև գլոբալ առումով շահագրգիռ պետությունների ու միջազգային կազմակերպությունների շահերի տարամիտումը:

Հոդվածում հեղինակի կողմից եզրահանգում է արվում, որ պաշտպանական կարողությունների հետևողական զարգացումը Հայաստանի տրամաբանված ընտրությունն է, որը բխում է պետության և ժողովրդի անվտանգության, ինչպես նաև խաղաղության պահպանման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև խաղաղության պարտադրման նպատակներից: Տվյալ նպատակներին հասնելու համար Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է մի գործընթաց, որը կոչվում է Պաշտպանության ռազմավարական վերանայում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ պաշտպանության ռազմավարական վերանայում, պաշտպանական բարեփոխումներ, ռազմական քաղաքականություն, անվտանգության

միջավայր, հայեցակարգ, վերլուծություն, սպառնալիք, կանխատեսում, քաղաքացիական վերլուծություն, հանրային իրազեկում:

Ռազմաքաղաքական գործունեությունը սոցիալ-քաղաքական գործունեության այն տարատեսակն է, որն անմիջականորեն և ուղղակի կապված է պաշտպանական համակարգի նպատակներին հասնելու համար բոլոր անհրաժեշտ միջոցների նախապատրաստման ու կրառման հետ: Տվյալ տեսակի գործունեության մեջ ռազմական բաղադրիչի առկայությունն այն բնութագրում է զինված միջոցների կիրառման տեսակետից, իսկ քաղաքական բնույթը բացահայտում է ռազմական քաղաքականության սոցիալական (հումանիտական) ուղղությունը: Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության ամբողջ համակարգը հիմնականում ձևավորվում, գործարկվում ու զարգացվում է պաշտպանական-անվտանգային համակարգում ազգային շահերին համապատասխանող դերակատարություն ունենալու նպատակով:

ՀՀ ռազմական դոկտրինում որպես անվտանգության սպառնալիքների գնահատում նշվում է, որ ռազմական անվտանգության սպառնալիքները երկրի պաշտպանունակության վրա բացասաբար ազդող, նրա ինքնիշխան գոյության և կայուն զարգացման համար վտանգներ հարուցող պայմաններ

րի, գործոնների և գործողությունների համախումբ են և ունեն արտաքին ու ներքին բնույթ [1]: Հայաստանի համար մտահոգության հիմնական աղբյուրը Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքն է, որով անհանդուրժող և ոչ կառուցողական քաղաքականություն է իրականացնում Հայաստանի ազգային անվտանգության շահերի նկատմամբ: Թուրքիան անվերահսկելի ռազմական օժանդակություն է ցուցաբերում Ադրբեջանին՝ հատկապես նախիջևնայան ուղղությամբ, ինչն արտահայտվում է ոչ միայն սպառազինության ու ռազմական տեխնիկայի հատկացումներով, այլ համապատասխան հրահանգիչների և «կենդանի ուժի» քողարկված երկարաժամկետ տեղակայումներով: Ադրբեջանի կողմից դրսևորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության նկատմամբ անմիջական ռազմական սպառնալիք, որի ուղիղ վկայություններից են այդ երկրի գերազանցականացումը, վարվող հայատյաց քաղաքականությունը, ինչպես նաև հակամարտության բանակցային գործընթացում որդեգրած մերժողական դիրքորոշումը: Չնայած միջազգային հանրության և հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի շարունակական ջանքերին, Հայաստանի կառուցողական դիրքորոշմանը՝ Ադրբեջանը հակված է դեպի հակամարտության ուժային լուծման տարբերակը: Պատերազմ սկսելու Ադրբեջանի վճռականությունը տեսանելի է ոչ միայն քաղաքական հայտարարությունների, այլև ռազմական ոլորտում գործնական քայլերի լույսի ներքո:

Ադրբեջանը ձեռք է բերում մեծ քանակի հարձակողական, հատկապես հեռահար սպառազինություն, հարձակողական բնույթի են ադրբեջանական զինված ուժերի պատրաստության և կիրառման պլանները: Ուժերի շփման գծում դիվերսիոն-հետախուզական խմբերի գործողությունները կրում են

դիտավորյալ ու պլանավորված բնույթ և նպատակ են հետապնդում շոշափել հայկական ուժերի պաշտպանության ամրությունը: Պակաս ուշագրավ չէ Ադրբեջանի կողմից վարվող տեղեկատվական պատերազմը, որի շրջանակներում պետական մակարդակով և բոլոր հարթակներում առաջ է մղվում հակահայկական քարոզչությունը՝ փաստերի խեղաթյուրմամբ հայկական կողմին ներկայացնելով որպես ագրեսիվ կողմ և տարածաշրջանային կայունության, համագործակցության ու զարգացման խոչընդոտ:

Ներկայումս Ադրբեջանի համար թերևս ամենաէական գսպող հանգամանքը հայկական զինված ուժերի մարտունակության աստիճանն է, որը թույլ է տալիս հակամարտող ուժերի շփման գծում ադրբեջանական կողմի բոլոր սադրանքներն արժանացնել համարժեք պատասխանի: Զինված ուժերի ընթացիկ և հեռանկարային զարգացման պլաններն ուղղված են բանակի մարտական կարողությունների զգալի ավելացմանը, որի շնորհիվ վերջինս ցանկացած պահի պատրաստ է լինելու արժանի հակահարված տալ հակառակորդին:

Հայաստանի Հանրապետությունում ընթացող պաշտպանական բարեփոխումների շրջանակում հիմնական նպատակ է դրվել ունենալ մարտունակ, արդյունավետ և ժամանակակից զինված ուժեր: Նշյալ որակների ապահովումը թելադրված է տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակի լարվածության մեղմացման միջոցառումներին հատկացվող ֆինանսական սահմանափակ ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու անհրաժեշտությամբ: Պաշտպանության ռազմավարական վերանայումն առաջին հերթին նպատակաուղղված է ազգային անվտանգությանն սպառնացող առկա և հավանական ռազմաքաղաքական ռիսկերի ու սպառնալիքների բացա-

հայտմանը՝ հիմքում ունենալով անցյալի սխալները և ձևավորելով հեռանկարային նպատակները [2]:

Վերանայումը նախատեսում է ազգային պաշտպանական համակարգի և դրա բաղադրիչների մանրակրկիտ վերլուծություն, որի նպատակը այդ համակարգի կարողությունների պարզումն է և դրանց համապատասխանեցումը բացահայտված ռիսկերի ու սպառնալիքների դիմակայմանը: Հիմնվելով վերլուծության արդյունքների վրա՝ Վերանայման գործընթացի շրջանակներում իրականացվում են ՀՀ զինված ուժերի զարգացմանը նպատակաուղղված որոշակի ուղեցույցների և ռազմավարական պլանների մշակման աշխատանքներ: Վերանայումը նախատեսում է ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ զարգացում: Տվյալ վերլուծության շրջանակներում շարունակաբար քննարկվում և նախանշվում են զինված ուժերին հատկացվող նյութական միջոցների նպատակային օգտագործման միջոցով առավել շատ արդյունք ստանալու լուծումներ: Այս համատեքստում ուշադրության են արժանի նաև իրավասու մասնագետների կողմից ներկայացվող առաջարկությունները, մասնավորապես այն, որ Վերանայման գործընթացում ռազմավարական վերլուծություն և դրա հիման վրա արվող կանխատեսումներ կատարելիս արդյունավետ կլինի օգտագործել նորամուծական հետազոտական մեթոդներ («PESTLE» վերլուծությունը, «SWOT» և «DECISION TREES» մեթոդները) [3]: «PESTLE» (political, economic, social, technological, environmental) մեթոդը հնարավորություն է տալիս դասակարգելու պետության վրա ազդող ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնները: «SWOT» (strengths, weaknesses, opportunities, threats) մեթոդը թույլ է տալիս պետության ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև արտաքին միջավայրից բխող հնարավորությունների և

սպառնալիքների ձկուն գնահատմանը գտնելու պետության առջև ծառայած խնդիրների լուծման տարբերակներ: «DECISION TREES» («Որոշումների ծառ») մեթոդի նպատակն է արդյունավետ քաղաքական ուղեգծի ընտրության ապահովումը, որի միջոցով վերլուծվում են այլընտանքային որոշումները: Մասնագետների կողմից Պաշտպանության ռազմավարական վերանայման մեթոդաբանության վերլուծության շրջանակներում ներկայացվում են նաև սցենարային պլանավորման, խաղերի տեսության և «կարմիրների թիմակազմման» մեթոդների կիրարկման ու արդյունավետության վերաբերյալ գնահատականներ [4]:

Փաստորեն, ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայումը երկրի պաշտպանական համակարգի և դրա գործունեության ռազմավարության վերանայմանն ուղղված միջոցառումների ամբողջություն է, որի նպատակն է գնահատել երկրի պաշտպանական համակարգը առկա և երկարաժամկետ հեռանկարում ակնկալվող սպառնալիքներին և մարտահրավերներին դիմակայելու կարողությունների տեսակետից՝ այդ առումով բացահայտելով համակարգի համապատասխանելիությունը (նաև ոչ համապատասխանելիությունը): Այն նպատակաուղղված է բոլոր մակարդակներում քաղված դասերի վերլուծության և թերությունների շտկման միջոցով երկրի պաշտպանության հետևողական զարգացման ապահովմանը՝ երաշձավորելով հուսալի պաշտպանության կարողություն:

Հուսալի պաշտպանական կարողությունը Հայաստանի անվտանգության միջավայրի իրատեսական գնահատմանը առկա և հնարավոր սպառնալիքներին ու վտանգներին հակազդելու, դրանց չեզոքացմանն ուղղված ռազմական գործողություններ վարելու զինված ուժերի կարողությունների ամբողջությունն է [5]: Որպես այդպի-

սին՝ Պաշտպանության ռազմավարական վերանայումն հնարավորություն է տալիս մշակելու պաշտպանական համակարգի զարգացման և կատարելագործման հնարավորությունները: Տվյալ գործընթացի գնահատման արդյունքները հիմք են հանդիսանում պաշտպանության ոլորտի հեռանկարային զարգացման ծրագրերի մշակման, հետևաբար, պաշտպանական բարեփոխումների համար: Պաշտպանության ռազմավարական վերանայումն իրականացվում է անվտանգության միջավայրի վերլուծության և սպառնալիքների կարճաժամկետ ու երկարաժամկետ ժամանակաշրջանների գնահատման միջոցով:

Պաշտպանության ռազմավարական վերանայումը հնարավորություն է տալիս հնարավորինս ձգգրիտ, հիմնավորված և նպատակաուղղված իրականացնել սպառնալիքների չեզոքացման աշխատանքների պլանավորումը, համապատասխան կարողությունների ստեղծումը, զարգացումը և ֆինանսավորումը: Այն զգալիորեն բարձրացնում է պետության պաշտպանունակությունը, ապահովում է անհրաժեշտ ձկունություն տարբեր ձգնաժամային իրավիճակներին համարժեք արձագանքելու համար և նվազեցնում է անակնկալ ձգնաժամային իրադրությունների ստեղծման հավանականությունը: Պաշտպանության ռազմավարական վերանայման իրականացումը նախատեսված է Հայաստանի ռազմական դոկտրինով, ինչպես նաև ՀՀ-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրով: Պաշտպանական ռազմավարական վերանայման գործընթացն Հայաստանի Հանրապետությունում նախաձեռնվել է և անցկացվում է սկսած 2008 թվականից [6]:

Վերանայման գործընթացում համակողմանիորեն հաշվի են առնվել զինված ուժերի զարգացմանը ներկայացվող ժամանակակից պահանջները, տարածաշրջանում անվտանգու-

թյան միջազգային համակարգերի հետ (ՀԱՊԿ, ԵԱՀԿ, ՆԱՏՕ) համագործակցության գերակայությունները, ինչին մեծապես նպաստել են նաև Հայաստանի Հանրապետության գործընկեր երկրների աջակցությունն ու փորձագիտական օժանդակությունը [7]: Այս համատեքստում պետք է ընդգծել, որ Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացում ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (որը կերպափոխվել է Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի) կողմից տեսամեթոդաբանական և գիտակիրառական փորձի ներբեռնման լայնածավալ ու բազմաբովանդակ աշխատանքներ են տարվել ու շարունակվում են ներկայումս՝ նաև արտասահմանյան փարձառու մասնագետների ներուժի օգտագործմամբ: Այս ռազմավարական «կալիբրի» հաստատության կողմից կատարվել են Ադրբեյջանի (2007թ. և 2013թ.), Վրաստանի (2008թ. և 2014թ.), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, ինչպես նաև Հայաստանի պաշտպանական-արդյունաբերական համալիրի և ռազմական կրթության համակարգի ռազմավարական վերագնահատումներ:

Որքան մանրակրկիտ ուսումնասիրվեն անվտանգության միջավայրը և այնտեղից բխող սպառնալիքները, այնքան հնարավոր կլինի ավելի կանխատեսել հակառակորդի ապագա քայլերը՝ ունակ լինելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության գործում առկա ուժերին և միջոցներին հաղորդել սպառնալիքներին դիմագրավման և դրանց հետ կապված ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ կեցվածք: Հայաստանի ֆինանսատնտեսական և ժողովրդագրական պայմանները, Լեռնային Ղարաբաղի հակամարտության՝ առկա դրության կամ Ստատուս քվոյի պահպանումը, այնպես էլ ռազմական գործողությունների վերսկսումը պետության համար զգալի ռիսկեր են պա-

րունակում:

Միաժամանակ, զինված ուժերի համար դիտարկվում է անհապատասխանություն, մի կողմից, ստանձնած առաքելության, այսինքն՝ խաղաղության պարտադրման և պատերազմում հաղթանակի հասնելու, և մյուս կողմից՝ տրամադրության տակ գտնվող կարողությունների միջև: Այս իմաստով հիմնական խնդիրն այդ ռիսկի նվազեցումն է: Ռիսկը նվազեցնելու համար կարելի է նախանշել երկու փոխլրացնող ճանապարհ: Առաջինը երկկողմ և բազմակողմ շրջանակներում դաշնակցային և գործընկերային համագործակցային ծրագրերին ռազմական և ռազմաքաղաքական ներգրավումն է, ինչը թույլ է տալիս որոշակիորեն այսպես ասած «փոխանցել» կամ «վերավստահել» Հայաստանի պաշտպանության խնդիրը: Երկրորդ ճանապարհը ռազմական կարողությունների ավելացումն է: Ռազմական կարողություններ ասելով շատ անգամ հասկացվում է միայն սպառազինությունը, ռազմական տեխնիկան և անձնակազմը: Մակայն, ռազմական կարողությունները պետք է դիտարկել ավելի ընդարձակ սպեկտրում՝ ռազմական գործողությունների տեսություն (այսինքն՝ մարտավարություն, օպերատիվ արվեստ և ռազմավարություն), կազմակերպչական կառուցվածք, կրթություն և ուսում, սպառազինություն, ռազմական տեխնիկա և նյութական միջոցներ, առաջնորդություն կամ հրամանատարական ձիրք, անձնակազմ և վերջապես, ենթակառուցյուններ: Միայն այս ենթադրություններում ապահովելով արդյունավետություն՝ հնարավոր է ապահովել առկա ու կանխատեսվող սպառնալիքներին դիմակայելու ունակ ռազմական բավարար կարողություններ:

Պաշտպանության ռազմավարական վերանայումը Հայաստանի Հանրապետությունում սկիզբ առավ և ընթանում է փուլային բաժանումներով: Առաջին

ՊՌՎ-ն կատարվեց 2008–2010թթ.՝ արդյունքում ընդունելով ՀՀ զինված ուժերի 2011–2015թթ. զարգացման միջնաժամկետ ծրագիրը, իսկ 2011թ. մայիս ամսին հրապարակվեց հանրային զեկույց՝ ՊՌՎ արդյունքների վերաբերյալ [8]: ՀՀ նախագահի 2013թ. դեկտեմբերի 5-ի կարգադրությամբ պաշտոնապես մեկնարկեց Պաշտպանության ռազմավարական վերանայման երկրորդ միջգերատեսչական գործընթացը [9]:

Պաշտպանական վերափոխումների ոլորտում՝ Հայաստանի շուրջ ձևավորված անվտանգության միջավայրից բխող ռազմական բնույթի սպառնալիքների չեզոքացմանն ունակ զինված ուժերի պլանային զարգացումն ապահովելու համար մշակվել է ՀՀ զինված ուժերի 2016–2020թթ. զարգացման պլանը, ինչպես նաև խելամիտ կերպով պլանավորվել են անհրաժեշտ ֆինանսական ու նյութական ռեսուրսները [10]: Զինված ուժերի զարգացման պլանի հիմնական նպատակն ըստ էության հանգում է ռազմական (մարտական) գործողությունների վարման ձևերի ու եղանակների փոփոխությանը՝ «Խելամիտ պաշտպանության» ձևավորմամբ: Այս նոր մոտեցումը ենթադրում է ուժային և ոչ ուժային զսպման համակարգի օգտագործում, իսկ զսպման ձախողման դեպքում՝ զբաղեցրած դիրքերի համառ պաշտպանության համատեղում ռազմական գործողությունները հակառակորդի տարածք տեղափոխելու հետ: Տվյալ խնդիրը պետք է հանձնարարվի փոքր ուժերով մեծ խնդիրների կատարմանն ունակ ստորաբաժանումներին (ուժեղացնելով գումարտակ, վաշտ/մարտկոց օղակը), որոնք, ղեկավարվելով «Հրամանատրում առաջադրանքի միջոցով» սկզբունքով, ի գորուկլինեն վարել ապակենտրոնացված ու տարատեղված մարտական գործողություններ:

Ռազմական քաղաքականության և անվտանգության հուսալի համակար-

գի ապահովումը բարդ ու համարժեք նյութական մեծ միջոցներ պահանջող գործընթաց է: Պաշտպանությանը հատկացվող միջոցները պետք է ամբողջությամբ ապահովեն բանակի մարտական ու գորահավաքային պատրաստությունը, պահեստային ուժերի ու պաշարների ստեղծումը: Հայաստանի տնտեսական կարողությունները այդքան էլ թույլ չեն տալիս իրականացնել պաշտպանության բնագավառի արմատական, անհրաժեշտ ծավալների վերազինում և վերակառուցում: Իր տնտեսական ցուցանիշներով Հայաստանը զգալիորեն զիջում է տարածաշրջանի երկրներին ու հավանական հակառակորդներին: Իսկ առանց համապատասխան ֆինանսական հատկացումների անհնար է բանակի լիակատար վերազինումն ու ուժերի հաշվեկշռի պահպանումը: Սակայն բանակի վերազինումը և վերակառուցումը չի կարելի հետաձգել մինչև լավ ժամանակները՝ տնտեսական վերածնունդը: Ռազմական հավասարակշռությունը հոգուտ իրեն խախտող հակառակորդը, անմիջապես օգտագործելով պահը, կդիմի վճռական գործողությունների:

ՀՀ պաշտպանության կազմակերպման ոլորտում առաջընթաց է արձանագրվել նաև քաղաքացիական վերահսկողությունն ուժեղացնելու ու հասարակության հետ համագործակցելու հարցերում: Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացում նույնպես տեղ են գտել հասարակության իրազեկման միջոցառումներ: Կարևոր քայլ է կատարվել հասարակական կազմակերպություններին ընդառաջ և հասարակության հանդեպ թափանցիկության ապահովման ուղղությամբ:

Հանրային օգտագործման ներկայացված ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման 2011–2015թթ. ամփոփման մեջ արդարացիորեն և հիմնավորված եզրահանգում է ներկայացվում, որ նկատի ունենալով Հայաստանի

շուրջ ձևավորվող ռազմաքաղաքական միտումները, ինչպես նաև զինված ուժերի բարեփոխման օբյեկտիվ անհրաժեշտությունը, ՀՀ պաշտպանական գերատեսչությունը Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը դիտարկում է իր հիմնական առաջնահերթություններից մեկը, որով կապահովվի տվյալ գործընթացի շարունակականությունն ու ՊՌՎ արդյունքների լիարժեք իրագործումը: Պաշտպանության ռազմավարական վերանայումն հնարավորություն է ընձեռել ստեղծելու այնպիսի պաշտպանական համակարգ, որն ունակ կլինի արդյունավետորեն դիմակայելու առկա և ակնկալվող անվտանգության ռիսկերին ու մարտահրավերներին [11]:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ ՀՀ Պաշտպանության ռազմավարության վերանայման գործընթացում իրագործվել են բազմաթիվ ու բազմապիսի միջոցառումներ՝ ուղղված զինված ուժերի պատրաստականության մակարդակը, կառուցվածքը, սպառազինությունը և ռազմական տեխնիկական առկա խնդիրներին համապատասխանեցնելուն՝ շեշտը դնելով որակական, այլ ոչ թե քանակական ցացանիշներին հասնելու վրա և ձգտելով զինված ուժերին հաղորդել “խելացի ուժերի” հատկանիշներ: Դրանով իսկ պետք է արձանագրել, որ իրականացվել է նպատակադրված քաղաքականություն, այն է՝ Պաշտպանության ռազմավարական վերանայման միջոցով ապահովել առկա սպառնալիքների բացահայտման, դրանց դիմագրավման համար անհրաժեշտ ռազմավարության մշակման, պահանջվող կարողությունների պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման աշխատանքների տրամաբանական կապը:

Հոդվածի ներկայացման ամսաթիվ՝ 07.06.2016թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007
2. ՀՀ պաշտպանության նախարար Ս.Օհանյանի ուղերձը ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման վերաբերյալ // <http://www.mil.am/media/2015/07/830.pdf>
3. Քրթանջյան Հ.Ս., ՀՀ ռազմավարական պաշտպանական-անվտանգային գնահատումների և փաստաթղթերի մշակումը որպես Պաշտպանության ռազմավարական վերանայման տեսամեթոդաբանական և գիտափորձաքննական հիմք // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի Հայկական բանակ ռազմագիտական հանդես, 3 (85), 2015, էջ 9-20
4. Պողոսյան Բ.Պ., Ավետիսյան Մ.Ա., Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացում որոշ նորամուծական հետազոտական մեթոդների կիրառման մասին // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի Հայկական բանակ ռազմագիտական հանդես, 3 (85), 2015, էջ 69-76
5. ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007
6. ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայում, <http://www.mil.am/hy/68/230/266>
7. ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Ա.Բաղդասարյանի ուղերձը // <http://www.mil.am/media/2015/07/834.pdf>
8. Տոնոյան Դ.Է., ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման սզկրունքներն ու մեթոդները // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի Հայկական բանակ ռազմագիտական հանդես, 3 (85), 2015, էջ 31-39
9. ՀՀ նախագահի 2013թ. դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ ՆԿ-218-Ն կարգադրությունը, ՀՀ ՊՏ 2013/66, 05.12.2013
10. Օհանյան Ս.Մ., ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման էությունը և նպատակները // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի Հայկական բանակ ռազմագիտական հանդես, 3 (85), 2015, էջ 21-30
11. ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայում 2011-2015թթ., հանրային օգտագործման համար // <http://www.mil.am/media/2015/07/832.pdf>

СТРАТЕГИЧЕСКИЙ ПЕРЕСМОТР ОБОРОНЫ В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ

АРЕН САРКИСЯН

*Национальная академия наук РА, Международный научно-образовательный центр,
заведующий кафедрой политологии доктор политических наук, профессор*

ТИГРАН КОЧАРЯН

Старший офицер-юрист военного комисариата РА, подполковник

Регион Южного Кавказа отличается наличием замороженных конфликтов, активизированием надвигающихся угроз. Для безопасности и стабильности проблематичным является тот важный фактор, что страны региона приняли диаметрально разные стратегии безопасности и обороны, политики присоединения центров власти и союзников. Последовательное развитие оборонных возможностей является логическим выбором для Армении, которая вытекает из целей государственной и общественной безопасности, а также поддержание и, в случае необходимости, даже принуждения мира. Для достижения этих целей в Республике Армения осуществляется процесс, который называется стратегический пересмотр обороны.

STRATEGIC DEFENCE REVIEW IN THE CONTEXT OF DEFENCE REFORMS

AREN SARGSYAN

International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Head of the Chair of Political Science Doctor of Political Science, Professor

TIGRAN KOCHARYAN

Senior Officer-lawyer of the Commissariat of RA, lieutenant colonel

The South Caucasus region is characterized by the presence of frozen conflicts, the activation of impending threats. For security and stability problematic is the important factor that the countries in the region have adopted a diametrically different security and defense strategies, policy of joining the centers of power and allies. Continuing development of defense capabilities is a logical choice for Armenia, which follows from the aims of the state and public security, and the maintenance and, if necessary, even the world compulsion. To achieve these objectives in the Republic of Armenia is carried out the process, which called the Strategic Defense Review.